Կայքում հաջող գրանցվելուց հետո, ընկերությունը կարող է ստեղծել իր անձնական էջը և կառավարել այն:
Ընկերության էջ ստեղծելու համար անհրաժեշտ է անձնական տվյալների էջից բացել համանուն բաժինը և

- Լրացնել ընկերության անվանումը
- Ըստ ցանկության լրացնել տեղեկություններ ընկերության մասին
- Նշել գործունեության հասցեն




- Ընտրել բաժինը: Բաժինը ընտրելը պարտադիր է, առանց դրա չեք կարող ստեղծել ընկերության էջը: Բաժինը ընտրելուց այն հայտնվում է կայքում Ընկերություններ բաժնում:



Ընտրելուց հետո անհրաժեշտ է հաստատել ընտրած տարբերակը: Ինչպես նաև բաժինը ընտրելուց հետո բացվում է ֆիլտրեր և չափորոշիչներ կցելու կոճակը: Սկզբից ընտրում եք ֆիլտրը և հաստատում, որից հետո բացվում է դրա չափորոշիչները `

**Ֆիլտրի կցում**







**Չափորոշիչների կցում`**






***Նշում`*** կցված ֆիլտրերն և չափորոշիչները ցուցադրվում են կայքի Ընկերություններ բաժնում, որտեղ կայքից օգտվողը կարող է տեսնել դրանք և ըստ դրանց ֆիլտրել ընդհանուր ցանկը:

Այնուհետև ըստ ցանկության՝

- լրացնել էլ. հասցե
- աշխատանքային ժամերը: Սեղմելով աշխատանքային ժամերի դիմաց գտնվող կոճակին(+), բացվում է շաբաթվա օրերը, միայն անհրաժեշտ է լրացնել ժամերը:
- ներբեռնել նկարներ՝ լոգո, նկար-բաններ և հիմնական նկար, որը կայքում երևալու է ընկերության մեր մասին էջում: Եթե ինչ-որ նկար չի տեղադրվում կայքում, ապա ցուցադրվում է կայքի է լռելյայն նկարը



Այնուհետև կարող եք՝

- Ըստ ցանկության լրացնել հավելյալ հեռախոսահամարներ
- Տեղադրել Whatsapp-ի և Viber-ի համարները:




- Ըստ ցանկության տեղադրել սոց ցանցերի հղումներ: Այն սոց ցանցի հղումը, որը ավելացնեք, դա ակտիվ կերևա ընկերության էջում:



- Կարող էք ըստ ցանկության ավելացնել այլ նկարներ, որոնք կարտացոլվեն ստեղծված ընկերության էջի պատկերասրահի հատվածում:
- Պահպանել: Պահպանելուց հետո այն հայտնվում է ընկերությունների այն ենթաբաժնում, որը ընտրել եք:




Ընկերության էջի օրինակը կատալոգում, լռելյայն նկարով՝



Ընկերության ներսի էջ՝




Կայքից օգտվող յուրաքանչյուր օգտատեր կարող է թողնել մեկնաբանություն և գնահատել ձեր ընկերությունը: Գնահատել ինքներդ ձեզ դուք չեք կարող: Ինչպես նաև չեք կարող ջնջել օգտատիրոջ կողմից թողած գնահատականը:

Ընկերության էջում կարող եք ավելացնել վիդեոներ՝ YouTube-ից, տեղադրելով հղումը: Անձնական տվյալների էջից բացելով Վիդեո բաժինը կարող եք ավելացնել մեկ կամ մի քանի վիդեո միանգամից: Ընկերության էջում այն կերևա համանուն
էջում:




Տեսքը կայքում՝




Ընկերության էջը ստեղծելուց հետո կարող եք ավելացնել ծառայություններ, ապրանքներ, մասնագետներ, ինչպես նաև հրավիրել այլ մասնագետների:

Ընկերության էջը իր բոլոր տվյալներով կարելի է ջնջել անձնական էջի կարգավորումներ բաժնից: